**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **02.02.2022թ.**

27.01.2022-02.02.2022թթ. ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ բժշկական դիմակների ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Խաչիկ Մալոյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Շահագործման բաժնի պետ, |
| Նաիրա Բաղդասարյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Հաշվապահ, |
| Զվարթ Ղազարյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Տնտեսագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Խաչիկ Մալոյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մարիա Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, հակադարձ աճուրդի և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին մասին:
3. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ՀԱԿԱԴԱՐՁ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգի հայտերը բացվել են eauction.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2022թ.-ի հունվարի 27-ին 15:30-ին, և ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի շենքում նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները, հակադարձ աճուրդի վերաբերյալ և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Հակադարձ աճուրդ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) | Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Բժշկական դիմակ | 2022-01-31 15:30:00 | 8860000 | 4430000 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | էլ. հասցե |
| 1 | Տումոե ՍՊԸ | 00441106 | Սեբաստիա,Անդրանիկի 4/8 | 093858008 | tumoe@yandex.ru |
| 2 | ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 00918262 | ք. Երևան, Սմբատ Զորավարի 11/1 | 041230222 | – |
| 3 | Ֆասթ Բիլդ ՍՊԸ | 01292712 | ՀՀ ք.Երևան Բաբաջանյան 43շ 15 | 093415803 | – |
| 4 | ԼԵՅԿՈ ՍՊԸ | 01224924 | ք. Երևան Ֆուչիկի 27/14 | +37498350303 | info@leykoalex.am |
| 5 | Ֆորտունա 84 ՍՊԸ | 01306378 | ՀՀ, Մարգարյան 29, բն. 15 | 091344414 | fortuna8484@yandex.ru |
| 6 | ԽԱՉՄԻՔ ՍՊԸ | 01031283 | – | 055755455 | a.mkrtchyan.a@gmail.com |
| 7 | Ջի-Էն-Ջի ՍՊԸ | 02831555 | ք. Երևան, Սարյան 36 շ., 12 բն. | 044-44-44-36 | eniram-300184@mail.ru |
| 8 | Ալեքսան Միքաելյան Դավիդի ԱՁ | 28112687 | Հաղթանակ 10փ. տ. 14 Մալաթիա-Սեբաստիա | +37495333757 | – |
| 9 | ՋԻ ԵՆ ԷՅ ՊՌՈ ՍՊԸ | 00495564 | ՀՀ ք. Երևան, Երկաթուղայինների 4, 3/1 | 096132206 | gago.marikyan@mail.ru |

31.01.2022թ.՝ հակադարձ աճուրդի ավարտին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները:

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | 1 | Տումոե ՍՊԸ | 8860000 | 10000000 | 20% | 12000000 | 425280 | 20% | 510336 | |
| 1 | 2 | ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 8860000 | 4430000 | 20% | 5316000 | 4297100 | 20% | 5156520 | |
| 1 | 3 | Ֆասթ Բիլդ ՍՊԸ | 8860000 | 5168333 | 20% | 6202000 | 4385700 | 20% | 5262840 | |
| 1 | 4 | ԼԵՅԿՈ ՍՊԸ | 8860000 | 4799167 | 20% | 5759000 | 4799167 | 20% | 5759000 | |
| 1 | 5 | Ֆորտունա 84 ՍՊԸ | 8860000 | 7088000 | 20% | 8505600 | 7088000 | 20% | 8505600 | |
| 1 | 6 | ԽԱՉՄԻՔ ՍՊԸ | 8860000 | 7375950 | 20% | 8851140 | 7375950 | 20% | 8851140 | |
| 1 | 7 | Ջի-Էն-Ջի ՍՊԸ | 8860000 | 8860000 | 0% | 8860000 | 8860000 | 0% | 8860000 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 8 | Ալեքսան Միքաելյան Դավիդի ԱՁ | 8860000 | 10000000 | 0% | 10000000 | 10000000 | 0% | 10000000 | Մերժված |
| 1 | 9 | Ջի ԵՆ ԷՅ ՊՌՈ ՍՊԸ | 8860000 | 13733000 | 0% | 13733000 | 13733000 | 0% | 13733000 | Մերժված |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը գնահատեց Տումոե ՍՊԸ-ի հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակցի կողմից սույն գնման ընթացակարգին հայտով ներկայացված Հավելված 1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. 31.01.2022թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել Տումոե ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Տումոե ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ Տումոե ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:
2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի վերաբերյալ գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | Տումոե ՍՊԸ | անբավարար |

4. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները:
5. Հաստատել համակարգի կողմից տրամադրված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստերը:
6. ընդունել ի գիտություն, որ համակարգի միջոցով գեներացված վերոնշյալ հայտարարությունները համակարգի միջոցով ավտոմատ հրապարակվել են տեղեկագրում:

7. Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ Տումո ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Խաչիկ Մալոյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Նաիրա Բաղդասարյան ____________

Զվարթ Ղազարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մարիա Ղազարյան ____________